

1896. № 109.

24

ՓԱՔՐԻԿ

# ՀԵՂԻՆԵՒ ԵՐԱԶԸ

Փոխադր. սուս.

Յովհ. Արաբտջեան

Գիշե է 5 իռպ.

Աւելանդը բազօ.

Հակարան Գ. Ա. Սանոյեանցի.

1896

1

4 - 89

ՓՈՎՔՐԻԿ

} ՀԵՂԻՆԵՒ ԵՐԱԶԸ

Փոխադր. ռուս.

Յովհ. Արարտաջեան

Ալէքսանդր ըստու.

Տպարան Գ. Ա. Սահմանեանցի.

1896

2001

Доз. Ценз. Тифл. 18 Ноября 1895 г.

15

50187-*wh*



35956-66

apparatu sui tam impinguo, tam by  
excellency excellencye adiu-  
tia suorum instrumentorum et legum, qui  
in eis quodcunq; iudicioribz illigantur  
ad eis adiutoriis adiutoriis  
quodcunq; iudicioribz adiutoriis

## Ժամացոյցը տասը լսվեց:

Փոքրիկ Հեղինեն, որ գրասեւ-  
դանիի տռաց նոտած Հետեւեալ  
օրու այ գառերն էր սովորում,  
միակեց գերքը, յօրանցեց և  
սկսեց գրքերը հաւաքել. յետոյ  
նառ գուրս գնաց ընդունաբան  
բարի զիշեր մաղթելու ձնողնե-  
րին և վերադառնալով իւր գե-

զեցիկ կահաւորուած սենեակը,  
սկսեց Հագուստները Հանել:  
Նա արդէն պատրաստում էր  
անկողին մտնելու, երբ գահ-  
լիքի բաց դռնից լսուեց ժա-  
մացուցի ձայնը, որ կէս էր խը-  
փում:

—Տասն և կէս . . . ասաց  
Հեղինէն և շտամով մտաւ վեր-  
մակի տակ. — տասնեմէկին  
Հագիւ կարելի մնի քնել. իսկ  
առաւօտեան ժամը եօթին  
պէտք է զարթնել: Հայրեկս և  
ուսուցիչս առել են, որ Հասա-  
կաւոր մարդիկ եօթը ժամից  
աւելի չպէտք է քնեն, եթէ

ուզում են առողջ մհալ, իսկ  
Հիւանդները և մահուկները  
գրանից քեզ աւելի էլ կարող  
են քնել: Ուրեմն Հիմաց քնե-  
լու լաւ ժամանակ է:

Նա բարձրացաւ տեղից մոմը  
Հանդցնելու, որ զբած էր ան-  
կազնու մօտի վոքրիկ սեղանի  
գրաց: Բայց այդ բանը նրան մի  
անգամից չլացնողուեց: Մոմա-  
կալը դժուում էր սեղանի Հակա-  
ռակ ծալքում, և որքան էլ նա  
աշխատում էր Հանդցնել կրա-  
կը, որքան էլ լայն էր բաց ա-  
նում ըերանիը, աշնուանենաց-  
նիւ բոցը աստանուում, գող-

դողում էր, բայց չէր հանգչում:

—Յիմաք, չի հասկանում, որ  
քնելու ժամանակ է, չի՞ որ ար-  
դին գեշեր է . . . այժմ համա-  
րեա ամեքն էլ քնած էն:

Հեղինէն բարկութեամբ եր-  
կարացրեց ձեռքը, վեր առաւ  
անհնազանդ մոմը, մօտեցրեց  
բերանին և բուրք ուժով փչեց  
—կամակոր բոցն խոկոցն հան-  
գաւ, զբանից յետոյ Հեղինէն  
յազմական ձեռվ մոմակալը  
զրեց իւր առաջուան տեղը:

Դրսում տիրում էր խորին  
լուսթիւն: Պայծառ լուսինը  
ճեմում էր պարզ երկնքի երե-

սին և ճառագայթը ձգել էր  
լուսամուտի վարագոյքի ծակո-  
տիներից ներս: Նա լուսաւորել  
էր սենեակի կահ՝ կարասիքը,  
նկարները և կամաց կամաց մօ-  
տենում էր անկիւնում դրած  
փոքրիկ մահճակալին, կարծես  
վախենում լինէր նրանից: Սպի-  
տակ անկողնում, հագին նոր,  
մաքուր սպիտակեղին, գեղեցիկ  
վերմակի տակ սպարկած էր ա-  
ռողջ, վարդագոյն, լեռը այտե-  
րով Հեղինէն: Նրա գեղեցիկ  
գանգուրներով ծածկուած կլո-  
ւեկ գլուխը հանգչում էր մա-  
քուր գլխակալի վրայ. խոշոր,

ու աչքերը դեռ ևս բաց էին  
նա զեռ մտածում էր զանազան  
բաների վրայ —լուսնի, վաղ-  
ուան դասերի, լաւ եղանակի. . .  
Բայց նրա աչքերն հետզետէ  
փոքրանում էին և կոպերը  
ծանրանում . . . Նրանք մի ան-  
գամ էլ կամացուկ բարձրացան  
և նորից ծածկուեցին . . . Նր-  
կար ու գեղեցիկ արտեանունքն  
ընկան քնքուց այտերի վրայ  
—Հեղինէն քնեց:

Լուսինն էլ հենց կարծես  
դրան սպասում լինէց: Նա կա-  
մացուկ շարժեց իւր ճառադայ-  
թը մահճակալից դէպի սեղանը,

այնտեղից դէպի սենեակի մեռ  
ծացը և վերջապէս կորու մար-  
մաշի վարագույրների մէջ. երեխ  
նա գնաց մի ուրիշին էլ անուշ  
քնի հրաւերելու:

Մութն է: Հեղինէն խոր քնի  
մէջ է:

Մութն է և խազադ: Յանկարծ  
մի սեղմ ձայն հնացեց.

—Վեր կաց:

Ամ ինչ բա՞ն է, նրան գար-  
լեցնման են, այն, ձայնը կըս-  
կնուեց:

—Վեր կաց:

Ոչ, նա չի լսում, նա խորը  
քնած է:

—Վեր կաց:

Հեղինէն մի շարժում է զոր-  
ծում քնի մէջ, բաց է անում  
աչքերը և խկոյն նորից փակում:

—Այս, այս ի՞նչ է . . . Թո-  
ղէք ինձ, ես քնել եմ ուզում:

—Վեր կաց:

Հեղինէն նստում է անկողնու-  
մէջ, տըորում քնաթաթախ  
աչքերը և շուրջը նայում, —ու-  
նեակը մութն է, մինչեւ անգամ  
լուսնի լոյս էլ չկայ. ամեն ի՞նչ  
չահղարտ է և լուռ . . .

—Իսկ ինձ այնպէս թուաց,  
որ իրը թէ ինձ զարթեցնում  
են. կարծում էի, թէ արդէն

վեր կենալու ժամանակ է:

Նա նորից կամենում է մըս-  
նել փափուկ վերմակի տակ:

—Վեր կաց, գնանք, —քըն-  
քշաբար շնչում է մէկը նրա  
ականջից:

—Ո՞վ է այս, ուր դնանք:

—Նուտով կ'իմանաս, թէ ուր  
սկսե գնանք, միայն վեր կաց  
և շուտով հագնուեր:

Ոչ ոք չի երևում բացց միայն  
անծանօթ քաղցր ձայնը մէզմ  
կերպով հնչում է նրա ականջ-  
ների մօտ:

Հեղինէն ոարտափում է . . .

—Մի վախիր, —լուռում է նորից

ձայնը, կտրծես նա դուշակեց  
Հեղինէի զգացմունքը. — գնանիք  
շուտով, մի շփոթութը, վեր առ  
դուլպաներդ և հադնութը:

Հեղինէն երկիրի հետ միաս-  
սին զգում է և զարմանք, և  
Հետաքրքրութիւն: Ովէ է սա,  
կամ լինչ կարող է լինել . . .  
Ակամայ նա վեր է առնում  
դուլպաները և կօշիկներն առ  
հադնում է, վար է առնում  
կախարանից շրջադրեսուր . . .

— Բայց ուր պէտք է գնանիք:  
Հիմայ գիշեր է, և կանգ է առ-  
նում նա:

— Այս, գիշեր է:

— Նշանակում է՝ գնալչի կտ-  
րելի: Փողոցներում մութն է:

— Ոչ, մութ չէ: Միայն դու-  
ես այդպէս կարծում. Նայիր. . .

Այդ խոկ բուզէին պայծառ-  
հառագայթը լուսամուտից ըն-  
կնում է սենեակի մէջ և իւր  
արծաթափայլ լոյսով լուսառ-  
րում ամբողջ սենեակը:

— Տեսնում ես:

Փոքրիկ Հեղինէն տեսնում է  
լուսնի լոյսը և ուրախանում,  
կարծելով, թէ գըա միջոցաւ  
կըկարսպանայ տեսնել իւր խօ-  
սակցի գէմքը: Նա ուշադրու-  
թեամբ նայում է աջ, ձախ,

յետ, — ոչ, ոչ ոք չի երկում:  
— ինչու ես ուշանում, — հըն-  
չում է նորից ձայնը:  
— Բայց չէ՞ որ հիմայ բոլորն  
էլ քնած են, — ասում է Հեղե-  
նէն, աշխատելով համսդել  
անձանօթին:

— Այդպիս ես կարծում:  
— Այն, իհարկէ, հիմայ ամեն  
ոք քնած է, պնդում է նա:  
— Հապա մի գնանք, ինքու-  
տես և իմացիր, թէ արդեօք  
գեշերը բոլորն են քնում: Ես  
հէնց գրա համար եկայ, որ ցոյց  
տամ քեզ . . .

Յանկարծ Հէղենէն զգում է,

որ վաղոցումն է: Նա ինքն ի-  
րեն հաշիւ չի կարող տալ, թէ  
ոս ինչպէս պատահեցաւ, — քիչ  
առաջ կանգնած էր իւր մահ-  
ճակալի մօտ, իսկ այժմ մեզմ  
ցուրտը գիտցում է նրա այտե-  
րին, երկնքից պահծառ աստ-  
գերը նրան են նացում, նրա  
հանգիպ երկում են աներ,  
լապտերներ, քարեայ սիւներ,  
և ինքը գնում է մի անձանօթ  
փողոցով:

Գիշեր ժամանակ, այսպիսի  
մթութեան մէջ, միայնակ, ան-  
ձանօթ տեղում . . . Հեղինէին  
գարձեալ տիրում է սարսափը:

—Ե՞՛Հ, բաւական է, մի վախեր  
այդքափ: Քեզ ոչինչ չ ի պա-  
տահել, հաւատաք ինձ, —նորից  
գուշակելով նրա միտքը, ան-  
ձանոթ ձայնը այնպիսի քըն-  
քշութեամբ է հնչում, որ Հե-  
ղինէի երկեւզը բոլորովին փա-  
րատուում է և սիրտը հանդու-  
տանում: Նա շատ է ցանկանում  
հարցնել անձանոթից, թէ ար-  
դեօք նվ է նա, ինչո՞ւ չի երե-  
ւում, բայց չի համարձակւում  
և միայն արագ-արագ առաջ  
է գնում փողոցով:

Երջակալքում նչ մի մարդ չի  
երևում, տիրում է խորին


## Литература:

—Ահա տեսնում էք, —ասում  
է Հեղինէն, —արդէն ես ասացի,  
որ ամեն ոք քնած է. Հենց  
այդպէս էլ է: Տեսնում էք, ոչ  
մի լուսամուտից կը ակ չի երե-  
ւում. Կայեցէք, լուսամուտների  
վեզկեցն անգամ ծածկած են:

—Այս, այստեղ բոլորը քնած  
են:

—եւ ամեն տեղ էլ քնած  
են. Հապա մի ասացէք տես-  
նեմ, թէ մըտեղ արթուն մար-  
դիկ կան:

—ՄԵՆՔ այդ խնային կրտես-  
նենք:



Նըանք այնպէս արագ են  
գնում, որ ձին և մինչեւ ահա-  
գամ երկաթուղին դժուար լիէ  
կարսղանայ հասնել նըանց յեւ-  
տեից. այնուամենայնիւ Հեղի-  
նէն չի ընդիմանում, չողնածու-  
թեան մի փոքրիկ նշով անգամ  
չի զգում: Որքան լաւ կըլինէր  
արագութեամբ ու-  
սումնարան գնալ, մահաւ անդ  
ուշացած ժամանակ . . .

Նըանք անցնում են մի ու-  
րիշ փողոց և Հեղինէի հանդէպ  
բացւում է մի ընդարձակ հրա-  
պարակ, իոկ հրապարակի մէջ  
տեղը՝ մի հոյակապ շինութիւն,

չորս կողմեց շնչարատուած սիւ-  
նազարդ որաշներով, — և այս  
ամենը լուսաւորուած անհաշ-  
մար լավտերներով:

— Օհօ, այս խօմ թատրոնն է, ~  
ու ըախութեամբ բացադանցում  
է Հեղինէն, Ճանաչելով այդ  
հոյակապ շինութիւնը:

— Այս, թատրոնն է, մենք  
խկոցն ներս կըմտնենք:

Մեքանի վայրկեան ևս — և  
ահա նըանք թատրոնում, մի  
դատարկ օթեակի մէջ են: Հե-  
ղինէն երկիւղով ներս է մտնում  
և նստում, որովհետեւ նա եր-  
բէք միայնակ թատրոնում չէ

Եղած: Բայց ոչ, նա միայնակ չէ. նրա աներեւովիթ ուզեկեցը մօտն է և ժպտալով ասում է:  
—Տեսնմում ես, այստեղ քնած չեն:

—Այս, այստեղ քնած չեն,  
մտածում է Հեղինէն և հայում շուրջը: Այստեղ ամեն ինչ փայլում, շողշողում և կուրացուցիչ լոյտ է արձակում: Մի քանի փայլուն Հագուստներ Հադած մարդիկ արագ-արագ շրջում են գեղեցիկ աղքեւթե առաջ: Կանաչ ծառների վերեր փայլում է արել, որի անհամար ճառագայթները, ընկնե-

լով Հայելտնման յատակի վը-  
բաց, լոյտի մի ամբողջ ովկիսա-  
նոս են կազմում: Հեղինէն  
դարձեալ իւթ Հայեացքը չորս  
կողմն է դարձեալ: Ամեն ինչ  
շարժում, փայլում և շլացնում  
է նրա աչքերը. ամեն տեղ ե-  
րեւով են բազմաթիւ սոկեաչ  
և արձաթեալ ուսագիրներ,  
սստղեր, շքանշաններ, սուսեր-  
ներ, գոյնզգոյն ժապաւէններ,  
նախշուն ձեռնոցներ: Բարձրա-  
ցը նա աչքերը վեսկ և տեսաւ  
առաստաղից կախած մի Հոկա-  
չական ջահ, ամբողջավին լոյտից  
և բիւթեղեց բաղկացած: Անու-

շահոտութիւն, աղմուկ, ծաւ  
փահարութիւն, երաժշտու-  
թիւն . . . Այս, այստեղ մար-  
դիկ քնած չեն:

—Ժամանակ չէ գնալու:

—Գնանք . . . ակամաց հա-  
մաձայնում է Հեղինեն:

Նա շատ ավաստում է թողնել  
և հեռանալ այստեղից: Ո՛չ,  
որքան ու բախ կըլինէր նա, եթէ  
մինչեւ լոյս այստեղ մնար: Նրան  
շատ հաճելի են թւում տի-  
րող ուրախութիւնը, անուշա-  
հոտութիւնը, սոկին, շքեզու-  
թիւնը, այդ յուզմունքը, փայ-  
լը . . .

Նրանք դարձեալ փողոցումն  
են:

—Աշա տեսնում ես, այստեղ  
ոչ ոք քնելու մասին չի եւ մը-  
տածում:

—Թատրոնում քնել: Ես եւ  
իմ այնտեղ եկած ժամանակ չեմ  
քնում, —պատասխանում է Հե-  
ղինեն:

Նրանք առաջ են գնում: Հե-  
ղինեն յանկարծ կանգ է առ-  
նում:

—Ի՞նչ պատահեցաւ:

—Նայեցէք, նրանք եւ չեն  
քնած, տառմ է նա, յոց տա-  
րով կառապաններին, որոնք

շտապով հաւաքւում էին թատրոնի անցքերի մօտ:

—Այս, նրանք գեռ քնած չեն, պատտասխանում է ձայնը:

Հեղինէն ուշիմ հայեացքով նայում է: Կապտերների լոյսը հասնում է մինչև հրապարակը և լուսաւորում կառապանների ու կառքերի խմբերը: Նրանք բարձրաձայն խօսում, ծիծաղում են, շարժում են ձեռքերը, դրաւխները: Ցուքոը կարմրացը է նրանց քիթը, այտերը . . .

—Գնանք:

Նա գնում և անդադար յետ է նայում:

Զարմանալի բան . . . Յանեկարձ նրա հանդէպ մուացւ լապտերի վոխարէն թատրոնի պայծառ արել երկեցաւ և որտ էու բացուցիչ լոյսով ամեն ենչ պարզ և որոշակի կարելի էր տեսնել:

—Ներկայացումը վերջացաւ, Հիմայ բոլով կառապանները հանդիսականներին կըտանեն և իրանք էլ կըգնան տուն ու կըքնեն, — երկար լուսութիւնից շետոց խօսում է Հեղինէն. այն ժամանակ քաղաքում ամեն մարդ քնած կըլինի, այնպէս չէ:

—Ո՛չ, ոչ ամենքը:

— Խեցնւ, մթթէ մի որ և է  
դործ կարելի է կատարել այս  
ժամանակ:

— Ահա այստեղ կարող ես  
տեսնել:

Նրանք մօտենում են մի տան,  
որի ռան վերեխ կախած նշա-  
նատախտակի վրայ սոկեալ խո-  
շոր տառ երով գրուած էր. «Հա-  
յատուն»:

— Ի՞նչ էք ասում, թուզ, — ծի-  
ծաղելով ասում է Հեղինեա. — չէ  
որ սա հացատուն է . . . Մթթէ  
դուք չգիտէք, որ հացատուն-  
ները շատ վաղ, թատրոնից  
անգամ վաղ են փակւում:

Խօսքը գեռ չվերջացրած,  
Հեղինեն իրան ունեակի մէջ է  
զանում: Ամեն ինչ հանդարտ  
է և լուս: Փողոցի լապտերի  
լոյսը լուսամուտի վեղիների Ճեղ-  
քուածքներից ներս է ընկել,  
այնպէս որ կարելի է նկատել,  
թէ ինչպէս պահարաններում  
մէկը միւսի վրայ, ընկած՝ քը-  
նած են անցեալ օրուանից մը-  
նացած մեծ և փոքր հացերը.  
ամեն մի անկիւնում զանազան  
ջեկ և աեսակի խմօրեղէնները  
եւար գլխի թափուած՝ հան-  
դիստ քնած են: Աենեակում ոչոք  
չկայ, դունեսը փակ են:

Հեղինէն արտէն բաց է աւ-  
նում թերանը, որ ասէ, թէ —աւ-  
հա տեսնում էք, ես չառացի,  
ոք...

Յանկարծ զանեթը բացւում էն  
և նա մտնում է մի ինչ որ նա-  
խասէնեակ, նրա ականջին մի  
տեսակ օտարոտի աւելի հա-  
ռաջանքների նման ձայներ են  
հանում: Նրա գէմ ու գէմը  
խոհանոցն է: Մի ահազին վա-  
ռարան վառւում է, կրակի  
լոյսը՝ խառնուելով երկու փոք-  
րիկ լամպաքների լոյսի հետ  
լուսաւորում է խոհանոցը: Պա-  
տերի մօտ գրաւած են երկաւ

և բարձր հասարակ սեղաններ,  
իսկ սրանց տակը շարաւած են  
կիսատակառներ, տաշտեր, չա-  
ներ, ձուաններով լի կողմիներ,  
ուրիշ մեծ ու փոքր ամաննե-  
րով իւղ այսաեղ ամեն  
բան ալբաթաթախ է —սեղան-  
ները, աշխատող մարդկանց ե-  
րեսները, հագուստները, չա-  
տակը, առաստաղը, —ըլլորը,  
բոլորը ծածկուած են ալիւրով:  
Ամեն ինչ այսպէս ալբաթա-  
թախ գրութեան մէջ տես-  
նելով, Հեղինէն չնկատեց, թէ  
ինչ են հագած բանուարները.  
—նրանք ըլլորն էլ առանց

շապիկների, մենչև գոտիները  
բոլորովին մերկ, բոքեկ ստքե-  
սին կոշիկներ հագած և գլուխ-  
ներին մի-մի սպիտակ գլխարկ  
դրած աշխատում են: Նրան-  
ցից մեքանիսը տաշտերի  
գլխին կանգնած անգաղար  
կռանում և ուղղում են, — սր-  
բանք խմոր են հունձում: Մերկ  
թեերը նրանք խրում են խմորի  
մէջ և ապա գժուարութեամբ  
գտար քաշում, այդ գործովազու-  
թեան ժամանակ մի տեսակ  
հրթիչ լուսարարուհին կարկան-  
դակ թխելիս այնքան հեշտու-  
թեամբ և շուտով է հունձում:  
Սակայն Հեղինեն մոռանում է,  
որ խոհարարուհու հունձածը  
միքանի ֆունտ է միայն, իսկ  
այստեղ ահագին տաշտել մէջ  
լցուած է ոչ թէ հինգտասը  
Փունտալիւր, այլ տաս-տասն-

է, թէ ինչ ձայներ էին, որ  
լուսում էին նախասենեակում  
եղած ժամանակ: Բայց մի բան  
նրան շատ է զարմացնում  
արգեօք ինչու նըանք այս գոր-  
ծըն այդպիսի մեծ գժուարա-  
թեամբ են կատարում, այնինչ  
իրենց խոհարարուհին կարկան-  
դակ թխելիս այնքան հեշտու-  
թեամբ և շուտով է հունձում:  
Սակայն Հեղինեն մոռանում է,  
որ խոհարարուհու հունձածը  
միքանի ֆունտ է միայն, իսկ  
այստեղ ահագին տաշտել մէջ  
լցուած է ոչ թէ հինգտասը  
Փունտալիւր, այլ տաս-տասն-

և Հինգ վութ միանգտմից, ո-  
րը հարկաւոր է լաւ հսկնձել,  
որպէսզի նրանից փափուկ հաց  
կաթելի լինի թխել:

Սաստիկ շոգից և չարաչար  
աշխատելուց բանուորների դէմ-  
քերը և մարմինները ծածկւում  
են քրտինքի խոշոր կաթելնե-  
րով, որոնք անդադար ցած են  
դլորւում: Տաքութիւնը քանի  
գնում աւելանում է, այնպէս  
որ, եթէ ջերմաչափ լինէր այն-  
տեղ, անշուշտ 40—45) աստի-  
ճան ցոյց կըտար:

Խմօրը հունձած, վերջացրած  
է: Երկու ժամուայ ընթացքում

նա հաղիւ բարձրանալ թթուի:  
Ուրեմն բանուորները երկու  
ժամուայ չափ կարող են հան-  
գստանալ: Որովհետեւ մինչեւ  
տուն գնալ-գալը անչարմար  
է—կարող են ուշանալ —նրանք  
իւրաքանչիւրը մի անկիւնում,—  
մէկը՝ ուղանի վրայ, միւսը՝  
տաշտի մէջ, երբորդը՝ տախտակի  
երկարութեամբ և այլն պար-  
կում են հանգստանալու: Այդ  
կարճ ժամանակամիջոցում նը-  
րանք այնպէս են կազդուրում,  
որ մինչեւ լոյս մի քաղէ անդամ  
դործից չեն հեռանում: Խմօրը  
բարձրանալուն պէս, բանուոր-

Ներն արդէն ոտքի վրայ են:  
 Նրանք տաշտերեց խմորը լցնում  
 են սեղանների վրայ, որոնց  
 մօտ շարւում են հինգ—վեց  
 հոգի, և ակսում են հաւասար  
 չափով կարատել, որպէսզի բու-  
 լու կարսներեց միւնոյն ծան-  
 րութեամբ հաց գուլս գալ,  
 կտրած կտորները տալիս են  
 հարկաններին, որոնք իսկոյն  
 գնտում, կլորում են և տալիս  
 միւններին. որանք գանազան  
 տեսակ հացերի ձեւը տալսվ  
 խմորի գնտերին, չանձնում են  
 վերջապէս վառաշանի մօտ  
 կանգնողներին, որոնք արդէն

ձգում են վառարանի մէջ եւ  
 վիելու: Ամեն մարդ իւր գործը  
 շատ լաւ գիտէ և այդ իոկ  
 պատճառով ամեն ինչ կարգին  
 և արագ առաջ է գնում:  
 Հեղինէն տեսնում է, թէ  
 ինչպէս խմորի կտորը արագու  
 թեամբ ձեռքեց ձեռք է անց-  
 նում: Տեսնում է, թէ ինչպէս  
 այդ կտորը միւրոպէի մէջ գըն-  
 տում, կանոնիաւորում է, և  
 տեսակ—տեսակ հացերի ձե-  
 ստանալով, մտնում է վառա-  
 րան, որտեղից քիչ ժամանակ  
 չետայ գուլս է դալիս արդէն  
 բոլորովին պատրաստ և տար-

ւում միւս սենեակը . . . Տես  
նում է ացն ամենը վաքրիկ  
Հեղինէն և զարձանում; Ամեն  
առաւօտ, թէցի Հետ նա գործ  
է ածում սպիտակ, թարմ հացը,  
բայց եթէք չէր լսած, թէ թնչ-  
պէս, որ ժամանակ և ուժ ձեռչ-  
քով է պատրաստւում այդ Հա-  
ցը . . .

—Ես չէի կարծում, թէ այն  
սպիտակ Հասարակ ըու լիները  
պատրաստելու Համար աչդքան  
աշխատութիւն է Հարկաւոր, —  
մտախոհ կերպով առում է Հե-  
ղինէն, եթք նւանք նորից գո-  
ղաց են գուրու դալիս:

—Բայց այս գեռ բոլորը չէ;  
Դու տեսար այստեղ միմիայն  
վերջական աշխատութիւնը, իսկ  
որքան սկզբնական աշխատու-  
թիւն էր գործ գրած այդ Հա-  
ցի վրայ:

—Ի՞նչ էք ուզում ասել:  
—Ես Հացթուխի աշխատու-  
թիւնը վերջնական և մ անուա-  
նում, որովհետեւ նա վերջաց-  
նում է այն գործը, որի վրաց  
նրանից առաջ շատ մարդիկ են  
աշխատել: Նա միայն թիւում  
է Հացը, և գու ուզգակի նրա-  
նից կարող ես գնել և ուտել:  
Բայց չէ որ Հաց թիւելու Հա-

և երկիր են պատրաստում.  
Նրանք ցերեկով են կատարում  
իրենց գործը:

—Այս, միայն նրանց ցերեկը  
և աշխատութիւնն սկսում են  
այն ժամանակ, երբ դեռ որիշ-  
ները հանդիսա քնած են լի-  
նում: Նրանք չեն քնում . . .

—Այս այս կողմը նայեցէք,  
— յանկաըծ բացադանչում է  
Հեղինեն, այստեղ էլ դեռ ևս  
քնած չեն: Տեսնում էք, բոլոր  
լուսամուտներից լոյսէ երևում,  
թէե ուս ոչ թատրոն է և ոչ  
հացատուն: Ասացէք, ինդը եմ,  
Բնչ բան է դա:

մար ալիւր է հարկաւոր, ալիւրի  
համար՝ հատիկներ, իսկ հա-  
տիկների համար մշակած երկիր:  
Եւ հենց այս ալիւրի, հատիկ-  
ների և մշակած զաշտի պա-  
տրաստելը սկզբնական ամենա-  
կարևոր աշխատութիւնն է, որը  
մենք այստեղ չտեսանք. եթէ  
մենք այդ սկզբնական աշ-  
խատութիւնը, չե՞ս լինե՞ս և  
վերջնականը՝ հացելուխի դոր-  
ձը, և դա այն ժամանակ չէիր  
կարողանալ սպիտակ, համեզ  
բուրիներ ճարել . . .

Իսկ ե՞զք են աշխատում այն  
մարդիկ, որոնք ալիւր, հատիկ

—Կամենմում ես տեսնել:  
 —Ոյ՞, այո՞, աղաջում եմ  
 ձեզ, —թախանձում է Հեղի-  
 նէն, —ես այժմ առեն բան կտ-  
 մենում եմ տեսնել. ինձ ուս-  
 տիկ Հետաքրքրում են այն ըու-  
 լոր մարդիկ, որոնք գեշերները  
 չեն քնում:

«Ո՞քան մեծ տուն է, իսկ և  
 իսկ պալատ. բայց ոչ, պալատ-  
 ների լուսամուտները այդպէս  
 երկար են նեղ չեն լինում: Սրա  
 պատերը շատ անձաշակ են  
 շինուած, որա կտորի բարձր  
 ծխնելուցիներից ու և թանձր  
 ծուխ է բարձրանում: Ի՞նչ

շինութիւն պէտք է լինի ու-  
 րեմն, —մտածում էր Հեղինէն:  
 —Սա գործարանն է, —բացատը-  
 րում է նրան աներեւոյթ ընկե-  
 րակիցը: Այստեղ էլ մարդիկ չեն  
 քնում և ամբողջ գիշեր աշխա-  
 տում են: Հացատներում, որ  
 դու արդէն տեսաթ, ամեն մի  
 աշխատութիւն, ամեն մի գործ  
 բանուորների ուժիհական ձեռ-  
 քով է կատարւում, իսկ այստեղ  
 մարդկանց օգնելու. Համար  
 հնարած և շինուած են զանա-  
 գան մեքենաներ: Մեքենաների  
 օգնութեամբ կատարւում են  
 ամենայն տեսակ ծանր գործեր:

գործարանում տմենալին դորձ  
կըդադարի, մի ակնթարթում կը-  
կանզնեն մեծ ու փոքր մեքե-  
նաների բոլոր մեծ ու փոքր ա-  
նիւները: Ասում ես այս որոտը  
— զա շոգեմեքենալի ձայնն է:

Երանք մօտենում են գործա-  
րանին, որքան մերձենում են,  
այնքան աւելի նրա ուսացած  
պատերից, փակուած նեղ լուշ  
ստմտաներից զօրեղ է լուսում  
մեքենաների ահեղ որոտը, որն  
աշխամ ծովի ալիքների որոտման  
է նմանում: Բայց ահա յան-  
կարծ դուռը բացւում է: Հեղե-  
նէն տնցինում է գործարանի

Մարդիկ միայն հսկում են, որ  
նրանք չփշանան, մաքրում և  
տալիս են նրան մի որ և է գործ  
կատարելու համար հարկաւոր  
նիւթեր: Գործարանի մեքենա-  
ները շարժւում են ոչ թէ մարդ-  
կանց օգնութեամբ, այլ մի ա-  
հագին շոգեմեքենալի, իսկ սա  
լուր այդ մեծագործութիւնների  
համար գլխովին պարտական է,  
հառարակ գոլորշուն: Շոգեմեք-  
ենան գործարանների համար  
նոյնն է, ինչ որ սիրտը մարդ-  
կանց համար: Եթէ չգործէ  
նա, եթէ նրա ահագին անիւր  
կանգ առնի մի րոպէ, —ամբողջ

շէմքից և կանգ է առնում։ Նրա  
հանդէպ բացւում է մի մեծ  
ունեակ, լամպարների դժգուն  
լոյսը հազիւ հազ լուսաւորուն  
է այս սենեակը։ այս մոացլ  
լուսաւորութեան մէջ մի ինչ որ  
բան փազլիլում, շարժւում, պր-  
տըւուում, օրօրւում է, բարձրա-  
նում, ցածանում, այս ու այն  
կողմն է ձգւում, որստում է,  
ուրլում, ճըւառում, ճըզճըզ-  
ում . . . Ահազին սենեակի մէջ  
մի տեսակ անախորժ, գարշելի  
հրա է տիրում։

Հեղինէն երկեւզից քաշւում  
է մի տնկիւն, նա պատրաստ է

շուտով փախչել ացդ տեղից։  
բայց հետաքրքրութիւնը պինդ  
շղթայիւլ է նրա ստքերը։ Նրան  
աներեսովթ ուղեկիցը խոստացել  
է տանել այն ամեն տեղերը,  
ուր մարդեկ գիշերները չեն  
քնում և մանրամասն բացա-  
տրել նրանց արած գործերը։ և  
ճիշտո՞ւ ահանրաքաղցը ձայնը  
չիցում է Հեղինէի ականջում . . .

Սա շալի գործարան է. բըշ-  
դից այստեղ պատրաստում էն  
թելեր, իսկ թելերից զանազան  
տեսակ մահուաներ, գրապներ,  
մի խօսքով ամեն տեսակ բըշ-  
դեալ դործուածներ։ Ոչիսար-

ներից նոր խուզուած բուրդն  
առհասարակ կեղտոտ և իւզոտ  
է լինում. ամենից առաջ հարշ  
կաւոր է նրան մաքրել և իւ-  
զեց դուել. մաքրելու համար  
քանուօրները բուրդը լցնում են  
սապոնի ջրով լիքը ամանների  
մէջ և մեքենան իւը երկար  
թաթերով լուսանում ու մաք-  
րում է նրան կեղտից և իւզեց:  
Բանուօրին մնում է միայն կան-  
գնել և հաւաքել մեքենայի  
միւս ծայրից սպիտակ ջրի հետ  
դժւզաթափուող արդէն բոլորու-  
մին մաքուը բուրդը. ցետոյ  
նրան չորացնում, դզում, մա-

նում են . . .

Հեղինէն համարեացի լուսմ...  
ձիշտ է՝ շատ հետաքրքիր է  
տեսնել, թէ ինչպէս են գոր-  
ծում այս մեքենաները, բայց  
դրանից աւելի նրան հետաքրք-  
րում են այսուեղ աշխատող  
մարդիկ: Նա մօտենում է դրանց,  
դիտում գէմքերը, լուսմ է խօ-  
սակցութիւնները և նրա եր-  
կիւզը ըստին անհետանու մէ,  
սրով հետեւ ոչոք նրան չի նկա-  
տում, ոչոք նրա վրայ ուշա-  
կրութիւն չի դարձնում և նա  
համարձակ շրջտում է սենեակից  
սենեակ, վազվզում սանդուխ-

ներով. . .

Յանիկարձ մի տարօթինակ տեսաբան ստիպում է նրան կանգ առնել, — նրա հանդէպ մի ենչառ աշագին սիպտակ կոյտեք առաջ են շարժում:

— Այդ լինչ է, — սարսափած հարցնում է Հեղինեն:

— Դա արդէն պատրաստի մահուգ է. բանուարներն ազգ տանում են ներկարան, որտեղ վեց վերջապէս զանազան գոյնի մահուգներ են դուքս գալիս:

Հեղինեն ուշադրութեամբ գէպի ազգ կոյտեքին է, նայում, առանելու գրանց երան:

ուորներին: Սիպտակ մահուտի վրաց հաղիւ-հազ նշմարւում են պինդ սեղմուած փոքրիկ նիշար ձեռքեր, ապիտակ կոյտեքի տակից հաղիւ-հազ երեսում են երեխաների գունատ գէմքեր, լսւում է նրանց ըորեկ սաքերի ձայնը, — և վերջապէս սպիտակ կոյտերն անհետանում են գուների ցետեր:

Դրանք փոքրիկ բանուարներն են, որոնք նոյնապէս զիշերը չեն քնում, այլ աշխատում են գործարաններում: Դրանցից մի քանիթը հասակաւորների մօտ են աշխատում և օդնում են

գնում իւր կարգով:

—Բայց չե՞ս ոք այս երեխան  
ները եօթը ժամից աւելի պէտք  
է քննեն, —ցիշում է Հեղինեն  
իւր կարդացածը և նացում, թէ  
ինչպէս փոքրներից մէկը՝ շապ-  
կի թևերն յետ ծալած՝ սոզում  
է մեքենայի տակը, որբում է  
այնտեղի կեղտոտուած յատակը,  
հաւաքում աղքը: Իոկ մեքե-  
նան շարժում է. դըռու...  
դըռու... ձայնում են մեծ ու  
փոքր անիւնները: Աչ, շնուտ,  
շնուտ գուրսարի, եթէ ոչ նրանք  
կըջարդեն, կըփշեն քո փոքրի  
անդամները: Բայց, ոչ, տչա

նրանց դանազան գործերում,  
իոկ մի քանիսն էլ իրանց գլխի  
են աշխատում: Գործարանի շատ  
մասերը լվքն են այդպիսի  
փոքրիկ բանուսըներսվ:

Աչա մանող մեքենան առ  
ստգութեամբ մաքուր բրդից  
թել է պատրաստում իւր խը-  
ւացուցիչ ձայնը տարածելով  
չորս կողմը: Յանկարծ դըռո...  
—Թելք կտրուեց, գործը խան-  
դարուելու վրայ է. մէկ էլ  
տեսնում ես, վրայ է համում  
փոքրիկներից մէկը և բանելով  
թելք ճացրերը, կապում է նը-  
րանց, և նորից ամեն ինչ առաջ է

Նա ողջ և առաղջ դուրս եկաւ,  
նա ոչնչից չի վախենում. տեսէք,  
նորից մտաւ մի ուրիշ մեքենայի  
տակ իւր գործը տեսնելու։ Այդ  
գործի համար հասակաւոները  
բոլորովին անցարմար են, հար-  
կաւոր են փոքրիկ արագաշարժ  
երեխաներ։

Հեղինէն անցնաւմ է մի այլ  
սենեակ։

Աստուած մի, ինչպիսի ահա-  
զին աղմուկ է տիրում այստեղ։

Սա գործող մեքենաների  
ձայնն է։ Գործարանի այս մա-  
սում պատրաստի թելերից գոր-  
ծուածներ են պատրաստուում։

Այստեղ ցածրիկ նստարանների  
վրայ շարուած են փոքրիկ  
բանուորները։ Նրանց բոլորի  
ըուբեկ ոտների մէկը երկարաց-  
րած է, որոնց մեծ և երկրորդ  
մատների մէջ գըտած է մի—մի  
իլիկ. այսպիսով նրանք մեքե-  
նայի մակուցիկ համար թել են  
մաստակարարում։ Ժըմ... Ժըմ...  
Ժըմ... պտտւում են իլիկները  
և սաստկութեամբ քերծում  
փոքրիկ մատները։

Որքան գեղեցիկ գործաւած-  
ներ են դուրս գալիս այդ մե-  
քենաների տակից. ինչպիսի  
բարիմներ, քեշմիքներ, ենչ դը-

ըապնեք, ... Որքան գեղեցիկ  
հագուստներ կարելի է կարել  
այդ հիանալի կտորներից: Գոր-  
ծարանից այդ գործուածները  
վաճառում են խանութատէր-  
ներին. մայրը կըդնայ և իւր  
սիրելի գոտեր համար կըդնէ  
այդ կտուներից, կըտայ գերձու-  
կու հուն կարելու և քիչ ժա-  
մանակից յետոյ արդէն պատ-  
րաստ կըլինի նոր հագուստը...

Բայց տալօրինակ բան, . . .  
Յանկարծ մեքենաները, բան-  
ուգրները, նոյն խոկ ամբողջ գոր-  
ծարանը անհետանում էն, . . .  
մեռում են միայն մեքանի կտոր

գործուածներ:

Եւ լինչ է տեսնում չեղինէն,  
—կտորները վուած են երկար  
ուղանի վրայ և ինչ ո՞ւ կտշ-  
տացած, վոքրիկ կանացի ձեռ-  
քեր ճարպեկութեամբ մեծ,  
ուուր մըկատներով կտրատում  
են նրանց զանազան ուզզու-  
թեամբ:

Յետոյ այդ կտորներն անց-  
նում են ուրիշ ձեռքեր, որոնք  
ոկտոմ են ասեղներով կարել,  
թակել, ծալքերանել և ացն...  
Վերջապէս, ահա նրանք պատ-  
րաստ են: Բայց որքան մեծ  
տարբերութիւն կայ այն երկար

կտորների և այս գեղեցիկ հա-  
գուստների մէջ . . .

Հեղինէն ագահումեամբ նա-  
յում է այդ գեղեցիկ հա-  
գուստներին, որոնք արևել նման  
փայլվլում են այդ աղքատիկ  
սենեակի մէջ: Պատի ժամա-  
ցոյցը վազուց արդէն խիել է  
երեք ժամը, բայց արհեստա-  
նոցում ոչոք քնելու մասին չի  
էլ համարձակւում մտածելու:  
Ի՞նչ քնել, պէտք է կարել,  
կարել ու կարել . . .

Նոցն իսկ ենքը — գլխաւոր  
վարպետուհին քնած չէ. նա  
շըջում է բազմաթիւ գերձա-

կու հիների շարքում և շտապե-  
ցնում թմբածներին — հարկաւոր  
է ժամանակին հասցնել պատ-  
ուիրները: Բոլորն էլ շտապե-  
ցնում են, — որը պէտք է գնայ  
թատրոն, որը այցելութեան,  
որը պարահանդէս . . .

Պարահանդէս . . . Ի՞նչ բան  
է արդեօք այդ պարահանդէսը.  
Հեղինէն երեկք պարահանդի-  
սում չէ եղած, նա գաղափար  
անդամ չունի գրա մասին:

Սակայն զարմանալի գիշեր է  
այս գիշեր: Ի՞նչ որ Հեղինէի  
մտքից անցնում է, կարծես,  
մէկն իսկոցն գուշտիում է, այդ

և շտապտւմ յաղեցնել նըս  
հետաքրքրութիւնը:

Յանիկարծակի՝ թատրոնական  
տեսաբանի նման՝ անհետածնու մ  
է նըս առաջից արհեստանոցը:  
Նըս ցած առաստաղի, կեզտու-  
ուած պատերի փոխարէն Հե-  
ղինէի. Հանդէպ բացւում է մի  
ընդարձակ, կապտագոյն առաս-  
տաղով և գեղեցիկ բարձր պա-  
տերով, դահլիճ. Երկնազմն  
առաստաղից կախուած է լու-  
սաւոր ջահը:

Ոչ ոք քնած չէ: Մարդկանց  
բազմութիւնից գահլիճի օպը  
բոլորովին ծանրացել է, ոքից

Հանդիսականների գէմքերի վրայ  
յոգնածութիւն և այլայլութիւն  
է կարգացւում. նըսնց գեղեցիկ  
Հաղուստները տրոբուել, փչա-  
ցել են: Երեխ այս է պատճ  
ճակտուագիրը: Դործարանում  
գժուարութեամբ գործուելուց,  
կեզտուա արհեստանոցից մա-  
քուր, գեղեցիկ գուրս գալուց  
յետոց, այստեղ, այս պարտհան-  
ուի, ոի շքեզ գահլիճում նըսնք  
վըսանում, կեզտուաւում են . . .

Ճեղինէն արդէն իմացաւ, թէ  
լինչ է պարտհանդէսը նըս  
հանդէպ լմնում է երաժ-  
շտութիւնը, մարդիկ՝ դերա-

սամնների նման՝ շարժւում — պա-  
րում են, նըանցից մի քանիսը  
ուրախ գուարթ են, միւսները  
գունատ, լոգնած, և վերջին—  
ների թիւն աւելի է երեսում.  
անկատիած հետեւեալ օրը նը-  
րանք կը հեւանդանան: Զէ՞ որ  
առողջ մնալու համար մարդեկ  
պէտք է մօտ եօթը ժամ քնեն:  
Համա ինչու սրանք չեն քնում:  
— Հոգ մի տանիք, սրանք էլ  
շուտով կը բուեն և կը գնան քը-  
նելու —, բացատրում է Հեղինէ-  
ին աներեւոցթ ուղեկիցը, — պա-  
րահանդէսը շուտով կը վերջա-  
նաց: Արդէն լուսանում է:

Գնանք:

Նըանք գուրա են գուլիս փո-  
ղոց: Գիշերն արդէն վերջանա-  
լու մօտ է և լոյսը հետզհետէ  
սկսում է բացուել:

Հեղինէն գլուխը կախ ձգած  
դնում է. աշնանալին ցուրա  
քամին շարժւում է նըա գան-  
գուրները: Արեւում է, որ նա  
սասախկ զբաղուած է եւ ը մըք-  
քերով: Ի՞նչ է մտածում ար-  
դեօք . . . :

Յանկարձ Հեղինէն գլուխը  
բարձրացնում է և ինչ է տես-  
նում, — քաղաքը մի կողմ է  
մնացել և ինքը գտնուում է մի

տավարակ տեղ:

Դա մի լայնատարած դաշտ է, սրտեղ կանաչի նշով չի եւ թեռւմ. նա ամբողջովին ծածկուած է քանդուած Հողի խոշոր վիերթերով. տեղ տեղ եւ ըկում են ահագին գնդերի նման բաներ, սրտեղ այս այն կողմն են շարժուած: Հեղինեն Հետաքրքր հացեացք է ձգուած այն կողմը և թէպէտ շատ զժուար է աշնանացին մառաւ խուզի միջից Հեռւուած մի բան որոշել, բայց և այնպէս, նրա սրտես աչքերը կարողանուած են պարզ սրտել այդ շարժուող

դնդերը, որտեղ ոչ այլ ինչ են, եթէ ոչ գութան, առաջնից եզներ լծած, իսկ յետեւց՝ գութանաւորը մաճը ձեռքին:

— Դա երկրագործ է, որ վարուած է երկիրը: Նա Հայ պէտք է յանէ, իսկ սրտէզսի գամինանը կարելի լինի յանեւ, Հարկաւոր է Հողը աշունքից մշակել, պատրաստել: Հողը պէտք է փափուկ լինի, որ մատադ ըստը կարողանայ Հեշտութեամբ տարածել իւթ բարակ արմատները: Հողը վարուած են գութանով, որից յետոյ յաքանիւ ատամներով փշրուած են կոշտացած

կտորները, ապա Հայահատիկը  
ցանում և նորից ցաքանում են:

—Այս, այս, այժմ Հատկա-  
նում եմ, ընդմիջում է յան-  
կարծ Հեղինէն. սրանք այն  
մարդիկն են, որոնց մասին ա-  
սացիք, որ պատրաստում են Հո-  
գը, Հատիկը և ալիւ ըլ, սրպէսզի  
Հացթու խները անողործ չմնան  
և մեղ Համար Հաց Հասցնեն:  
Նրանք թէ կեշերը քնում են,  
բայց նրանց ցերեկն ու աշխա-  
տութիւնը սկսւմ են այն  
ժամանակ, եթք ուրիշները դեռ  
Հանգստանում են: Յիշում եմ:  
Հեղինէն տեսնո՞ւ Ե, թէ

ինչպէս երկաթեալ խոփը խթւում  
է Հոգի մէջ, ինչպէս նըան դուքս  
են քաշում աշնտեղից գեւզական  
ուժն զ եզները և վերջապէս,  
ինչպէս կալչուն Հոգի վրայով  
դութանի յետեից դնում է  
չարքաշ Հողագործը:

Քամին բարձրանում է և տա-  
րածում մառախուղը. Հեռու  
անտառի յետեից արեկի Ճա-  
ռագայթները ընկնում են դաշ-  
տի վրայ և լուսաւորում ան-  
սահման արտերը. . .

—Քիտէք ինչ կայ, —յանկարծ  
ասում է Հեղինէն. —սրանից  
յետոց եռ գեշերները Հանգիստ

քնել չեմ կարող:

— Ի՞նչու:

— Այնպէս, ես չեմ մոռանալ  
այն, ինչ որ գուշ ցայց տուիք  
ինձ: Բոլոր մարդեկ աշխատում  
են... ես չեմ կամենում քնել:

— Չես կամենում քնել, — իսկ  
մթիմէ մոռացար այն, ինչ որ  
կարգացել էիս գըքում, մոռա-  
ցմը, թէ քանի ժամ պէտք է  
մարդս քնի, որ առաջ մնայ...  
Քնիք, որդեակ, քնիք հանդարտ  
ու խաղաղ, որպէսզի միշտ ա-  
ռողջ, ուժեղ և ուշախ մնառ,  
ցերեկով էլ մարդ կարող է շատ  
գործեք կատարել, այդքանք

շաւական է քեզ Համար: Տուր  
ինձ ձեռքեւ, տեսնում ես, որ-  
քան կլոր ուժեղ ձեռք է, ոտ  
կարող է շտու ու շատ բարի  
գործեք կատարել և ցերեկով,  
եթէ միայն ցանկանառ... Մնառ  
բարեաւ, ժամանակ է բաժան-  
ուելու: Հեղինէն զգում է, որ  
մէկը կամացուկ սեղմեց իւր  
ձեռքը և շուրջն է նախում, բայց  
ոչ ոք չի երեւմ:

Նա տեսնում է, որ մառա-  
կուզը բոլորովին անհետացաւ,  
քամին փախցրեց ոեւ ամպերը,  
մթին անտառի ետևիցբարձրա-  
ցաւ պայծառ արեգակը. նրա

Ճառագայթները հետդիեմ  
լայնանում, տաքանում, պայ-  
ծառանում են. . .

Ճառագայթներից մէկն ընկ-  
նում է Հեղինէի սենեակի մաք-  
մաշի վարագույքների վրայ, լու-  
սաւորում է սենեակը և զար-  
թեցնում նրան:

Գիշերն անցկացաւ; Նրադր  
լիրջացաւ:

Հեղինէն զարթնեց խոր քնից:

0014846



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0014846

Հումով կը տալ ագքուեն

I

Մ. Բ Հ Ա Հ

ԱՆՁ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՅՐԵՐ

II

Գ. Լ Ի Ւ Ե Ւ

Ա Հ Մ Ա Ը

(ԲԼՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՄԱՆՔԻՑ)

891.715

Կ-89